<< ՍԵՎԱՆԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>>

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Կրտսեր դպրոցականի ստեղծագործական ընդունակությունների զարգացումը փոքրածավալ տեքստերի ձևավորման գործընթացում

Առարկա՝ դասվար

Հեղինակ՝ Ֆլորա Առաքելյան

Ուսումնական՝ Սևանի Վ.Կարապետյանի անվան N 3 հիմնական
հաստատություն դպրոց

Բովանդակություն

1. Ներածություն
2. Գլուխ 1 . Կրթության բովանդակությունը
3. Գլուխ 2 .Ուսուցման ձևերն ու մեթոդները
4. Եզրակացություն
5. Գրականություն

Ներածություն

Կրտսեր դպրոցականի կրթության և դաստիարակության հարցը վստահված է տարրական դպրոցի ուսուցչին : Կառավարությունը նոր պատական չափորոշիչն համապատասխան կրթություն է ակնկալում դպրոցից : Այն իրականացվում է տարբեր մեթոդներով միջոցներով : Ուսուցչին տված է ազատություն այդ գիտելիքների ձևավորման ընթացքը կազմակերպելու գործում : Գիտելիքները պետք է ձևավորվեն ողջ կյանքի համար : Աշակերտի ստեղծագործական կարողությունները ձևավորելը լրջագույն խնդիր է , որը պետք է իրականացվի ուսուցչի վարպետության շնորհիվ : Ուսուցիչը պետք է բարենպաստ միջավայր ստեղծի , որպեսզի ստեղծագործական մթնոլորտ առաջանա երեխաների մոտ : Դա պետք է դառնա ինքնաբուխ , երեխայի սրտից , մտածելակերպից ձևավորված փոքրածավալ տեքստ , որն արտացոլում է նրա ցանկությունները , պատկերացումները և վերաբերմունքը բնության երևույթների , առարկաների , նկարների , միջադեպերի մարդկային հարաբերությունների , կենդանիների , թռչունների վերաբերյալ : Այդ գործը միանգամից հնարավոր չէ անել , այլ պետք է անել փուլ առ փուլ : Երեխաներին պետք է մղել դպրոցական կյանքին վերաբերող դեպքերի վերաբերյալ շարադրանք ստեղծելուն ՝ բանավոր կամ գրավոր :

Ստեղծագործական ունակությունների ձևավորման նպատակներն են՝

ա) Ինքնուրույն մտածել և արտահայտվել (մաքուր) գրական հայերենով:

բ) Կարողանալ նկարագրել տեսածը, լսածը, ընկալածը, նշել սեփական կարծիք, կատարել վերլուծություններ:

Գլուխ 1

Տարրական դասարաններում ուսուցման կարևորագույն խնդիրներից է բանավոր կամ գրավոր ինքնուրույն խոսք կառուցելու կարողությունը: Ուսուցչի դերը շատ մեծ է այդ աշխատանքները կազմակերպելու գործում : Աշխատանքն սկսվում է առաջին դասարանում բոլոր դասաժամերին բանավոր խոսքի կառուցման և մայրենիի դասաժամերին նաև գրավոր փոքրածավալ տեքստերի ստեղծագործության աշխատանքները կազմակերպման պահից: Աշխատանքի հաջողությունը կախված է ուսուցչի վարպետությունից և մոտեցման ձևերից ու հնարներից: Ցանկացած լեզվի տիրապետելու ընթացքում շատ կարևոր է սեփական մտքերը ճիշտ ձևակերպելը, արտահայտվելը, խոսք կառուցելու կարողությունը, որը գրագիտության հիմքն է հանդիսանում:

Մարդկային շփումների ընթացքում ևս կարևորվում է գրագետ խոսք կառուցելու կարողությունը:

Երեխայի կյանքում ամեն ինչ հարթ չի ընթանում: Նա կարող է ապրել հուզական պահեր, զգալ ուրախություն, տխրություն և տարբեր զգացողություններ ունենալ: Շատ կարևոր է, որ երեխան կարողանա պատմել, բացատրել իր զգացածը, նկարագրել իր վիճակը: Այդ կարողությունը օգնում է երեխային թեթևանալ, հոգեպես հանգստանալ, բեռնաթափվել: Առաջին դասարանում այս աշխատանքը կատարվում է դասագրքերի առարկայական բովանդկության շուրջ, կյանքից վերցրած դեպքերի, էքսկուրսիաների, նկարների, պատմվածքների, հեքիաթներ պատմելու, վերլուծելու, ներկայացնելու ձևով: Առաջին դասարանում ավելի շատ աշխատանքը կատարվում է բանավոր խոսքի ձևավորման ընթացքում:

Սկսած երկրորդ դասարանից աշխատանքը ավելի շատ ջանքեր է պահանջում: Այստեղ արդեն առաջ է գալիս նաև գրավոր խոսք կառուցելու անհրաժեշտությունը: Ուսուցիչն սկսում է փոքրածավալ տեքստեր ստեղծագործելու կարողություններ և հմտություններ սովորեցնել: Եթե այս գործընթացում դասարանը հասնում է հաջողության, ապա սա հիմք է հանդիսանում հետագայում ավելի մեծ ծավալի տեքստեր հորինելու և ստեղծագործելու համար: Ուսուցիչը պետք է լինի բծախնդիր և հետևողական

այս աշխատանքները կազմակերպելիս: Ուսուցիչը պետք է հաշվի առնի երեխաների ընդունակություններն ու կարողությունները: Ուսուցումը պետք է համապատասխան դարձնել երեխայի հնարավորություններին, սովորելը երեխայի համար պետք է դարձնել հաճելի, մատչելի: Պետք է մեծ ուշադրություն դարձնել միջանձնային հարաբերություններին:

Գլուխ 2

Այս աշխատանքը հիմնականում կարելի է կազմակերպել խմբերով: Խմբերը պետք է ձևավորել տարբեր սկզբունքներով: Կարելի է բաժանել չորս հոգանոց խմբերի: Նախքան խմբերի բաժանելը, երեխաներին պետք է տալ գեղարվեստական բնագրեր, դրանց շուրջ աշխատանք տանել: Երեխան պետք է իմանա, որ բնագիրը ունի սկիզբ, ընթացք և վերջ: Երեխան պետք է հարստացնի իր բառապաշարը ընթերցանության միջոցով : Գաղտնիք չէ, որ այս սերունդը քիչ է կարդում: Ընթերցելու նկատմամբ սեր արթացնելու համար ուսուցիչը կարող է բնության նկարագրություններ, հետաքրքիր միջադեպեր, դեպքեր կենդանիների, թռչունների մասին նկարագրություններ դուրս բերի հայ անվանի գրողների ստեղծագործություններից և մատուցի երեխաներին , նույնիսկ կարելի է հատվածները պահանջել անգիր անել բառապաշարի հարստացման գործնթացն ապահովելու համար:

Օրինակ՝

Ակսել Բակունցի ստեղծագործություններից՝ <<Մթնաձոր>>, <<Միրհավ>>, <<Օրանջիա>>, <<Բրուտի տղան>>, <<Ալպիական մանուշակը>> ստեղծագործություններից հանել բնության նկարագրություններ և յուրացնել անծանոթ բառեր ու բառակապակցություններ: Թև Բակունցի ստեղծագործությունները տարրական դասարաններում չեն անցնում, սակայն կարող են երեխաների մեջ հետաքրքրություն առաջացնել և նրանք կարող են հետագայում ծանոթ լինելով այդ ստեղծագործություններին, սիրով դրանք ընթերցել: Շատ հետաքրքիր դեպքերի նկարագրություններ կան Վախթանգ Անանյանի << Որսորդական պատմվածքներ>> շարքում: Այս աշխատանքը ուսուցիչը կատարում է արդեն երրորդ, չորրորդ դասարաններում:

Օրինակ `

Մթնաձոր տանող միակ արահետն առաջին ձյունի հետ փակվում է, մինչև գարուն ոչ մի մարդ ոտք չի դնում անտառներ: Մթնաձորում այժմ էլ թավուտ անտառներ կան, ուր ոչ ոք չի եղել: Ակսել Բակունցի <<Միրհավ>> պատմվածքից `

Աշուն է, պայծառ աշուն Դիլան Դային նստել է հնձանի պատի տակ ընկուզենու չոր կոճղերին: Նա …

Օդը մաքուր էր, արցունքի պես ջինջ: Կապտավուն սարերն այնքն մոտ, այնքան պարզ էին երևում, որ լանջերին երևում էին կարմրին տվող մասրենու թփերը:

Ծառերն ընկնում են, փտում, ընկած ծառերի տեղը նորն է ծլում , արջերը պար են խաղում, սուլում են չոբանի պես, ոռնում են գայլերը, դունչը լուսնյակին մեկնած, վարազները ժանիքով փորում են սև հողը, աշունքվա փտած կաղիններ ժողովում:

Բարձր են Մթնաձորի սարերը, դրանից է, որ ամռան երկար օրերին էլ արևը մի քանի ժամ է լույս տալիս Մթնաձորի անտառներին: Եվ երբ հեռավոր հարթավայրում արևը նոր է թեքվում դեպի արևմուտք, Մթնաձորում ստվերները թանձրանում են, սաղարթի տակ անթափանց խավար է լինում, արջերը որսի են դուրս գալիս, վարազներն իջնում են ջուր խմելու, իր որջի առաջ զիլ ոռնում է գայլը, ոռնոցը հազար բերան արձագանքով զրնգում է Մթնաձորում:

Ուսուցիչը աշակերտներին սովորեցնում է զգալ ստեղծագործության ռիթմը, տրամադրությունը, երաժշտականությունը, բնության նկատմամբ հոգատարությունը, կարծիք հայտնել տվյալ բնագրի հերոսների մասին, արտահայտել սեփական վերբերմունքը, կարողանալ ազդել սեփական զգացմունքների և վարքագծի վրա: Այս կարողությունները միանգամից չեն ձևավորվում: Առաջին փուլում փոքր ծավալ ունեցող բնագրերի վրա պետք է սովորեցնել կապակցված խոսք կառուցելու հնարներին: Կարելի է տալ որոշակի բառամթերք, որոնցով երեխաները կարողանան փոքրածավալ տեքստ հորինել և վերնագրել:

Օրինակ՝

Ճայ, սպիտակափետուր, լազուր երկինք, պտտվել, նավ, նավաստի, ծով, անհանգիստ, ալիքներ, ալեկոծվել, մակույկ, նավապետ, ուժեղ քամի, խելացի թռչուն, փրկել:

Եթե աշխատանքը խմբային է (չորս հոգանոց խմբեր) երեխաները կատարում են աշխատանքի բաժանում : Յուրաքանչյուրը տրված բառամթերքով կազմում է նախադասություններ : Խումբը որոշում է ամենահաջողված նախադասությունները մտքով կապակցել և ստեղծել փոքրածավալ տեքստ : Մտածում են վերնագրելու մասին : Յուրաքանչյուրն ասում է իր կարծիքը : Միասին ընտրում են ամենահաջող տարբերկը և վերնագրում :

Օրինակ՝

Լազուր երկնքում անհանգիստ պտտվում էին սպիտակափետուր ճայերը: Ծովն ալեկոծված էր, ուժեղ քամին խառնել էր բնության անդորրը: Բաց ծովում նավ էր լողում: Նավաստիները նկատել էին մակույկ, որի վրա մարդը հսկայական ջանքերով փորձում էր հաղթահարել հրեշավոր ալիքների ուժը: Նավապետը նկատել էր, որ ճայերն անհանգիստ են: Նրանք նկատեցին

մակույկը և փրկեցին անօգնական մարդուն: Խելացի թռչունները կարողացն օգնել խեղդվող մարդուն :

Վերնագիր՝ Խելացի, սպիտակափետուր ճայերը: Ճայերը փրկեցին մարդու կյանքը: Ուսուցիչը պետք է կարողանա հասնել այն բանին, որ երեխաներն օգտվեն բառարաններից, հանրագիտարաններից, համացանցից, ընտրել օգտակարը և օգտագործել այն խոսք կառուցելու ընթացքում: Երեխաները պետք է ընկալեն գեղեցիկը, հմայիչը, փոխաբերական արտահայտությունները, պետք է կարողանան հիանալ գեղարվեստական ստեղծագործությամբ: Ինքնուրույն ստեղծագործական աշխատանքի մղելու համար կարելի է առաջակել նկարներ, բացիկներ, առարկաներ և պահանջել բնութագրել դրանք: Օրինակ խորանարդում մեթոդական հնարի միջոցով կարելի է բնոթագրել տրված առարկան, նկարը կամ բացիկը: Խորանադի կողմերի վրա գրված են համապատասխան հարցերը: Նկարագրել:

Նկարագրել - նկարագրիր այն , ինչ ես տեսնում :

Համեմատիր – համեմատիր ի՞նչի է նման, ինչի՞ց է տարբեր:

Զուգորդիր - զուգորդիր ինչի՞ մասին է ստիպում քեզ մտածել :Ի՞նչ մտքեր են ծագում դրա հետ կապված :

Վերլուծիր – պատմիր , թե ինչիպե՞ս և ինչի՞ց է այն պատրաստված:

Կիրառիր - կիրառիր ինչպե՞ս կարելի է օգտագործել այն:

Թեր և կողմ փաստարկներ: Յուրաքանչյուր խմբին կարելի է տալ իրարից տարբեր մեկ առարկա:

Օրինակ՝ ծաղկած ճյուղ, կավից կուժ, խնձոր, ափսե, ժամացույց և այլն: Պատասխանելով յուրաքանչյուր հարցին երեխաները կազմում են փոքրածավալ տեքստ տվյալ առարկայի մասին:

1. Սա ծառի ծաղկած ճյուղ է: Այն ծածկված է սպիտակ, նուրբ թերթիկներով, անուշաբույր ծաղիկներով:
2. Այն նման է նորահարսի, տարբերվում է չորացած ճուղերից: Այն ինձ ստիպում է մտածել քնքշաբույր գարնան մասին: Մտածում եմ, որ աշնանը առատ բերք է լինելու: Նույնիսկ զգում եմ մրգի համն ու հոտը:Բնությունն է նրան այդպիսին ստեղծել: Ես նրան կփայփայեմ և կհիանամ չքնաղ տեսքով և նուրբ հոտով:

Բոլոր հարցերին պատասխանելուց հետո ձևավորվում է փոքրածավալ տեքստ առարկայի մասին: Երեխաները սովորում են ինքնուրույն խոսք կառուցել և արտահայտվել:

Շատ կարևոր է հուզական մթնոլորտ ստեղծելը, էքսկուրսիաներ, երաժշտության ունկնդրում, այցելություններ պատկերասրահ, նկարի դիտում և սեփական կարծիքների արտահայտում: Երեխան պետք է կարողանա ոչ միայն տեսածը նկարագրել այլև տեսածը պատկերացնել, երևակայել և ներկայացնել գրագետ ձևով ու գեղեցիկ բառապաշարով:

Դասարանը խմբերի բաժանելիս ուսուցիչը կարող է գրել իր տարբերակը և վերջում ներկայացնել քննարկման:

Փոքրածավալ տեքստեր ստեղծագործելու հիմքում դրվում է աշակերտների ճիշտ և գեղեցիկ խոսելու յուրահատկությունները նրա գիտակցությանը հասցնելը: Երեխան պետք է ճիշտ բառամթերք ընտրի, ճիշտ ձևավորի բառերի միջև կապերը: Բառերի կրկնությունը խոսքի մեջ համարվում է բնագրի թերություն: Երեխաները սիրում են յուրաքանչյուր նախադասության մեջ կրկնել նույն բառերը: Ուսուցիչը պետք է հասնի այն բանին, որ նախադասույթունները փոխկապակցված լինեն մտքով: Կարելի է տալ հենակետային բառեր, որոնք կարելի է ընտրել աշակերտների մասնակցությամբ: Բառերի մտքից կարելի է ենթադրել վերնագիր, որը գտնում են աշակերտները և ըստ վերնագրի ձևակերպում են համապատասխան մտքեր ու առաջանում է փոքրածավալ տեքստ :

Օրինակ՝

Հայրենիք, չքնաղ, անկրկնելի, քարքարոտ, պատերազմ, զինվորներ, առյուծասիրտ, հայրենի հող, անսահման, հուզմունք, նվիրվածություն: Բառերը ուսուցիչը գրում է գրատախտակին, երեխաներն ավելացնում են որոշ բառեր: Ինչ ծագում է իրենց մտքում: Ուսուցիչը ուղղորդում է, վերնագիր ստեղծելու կարողություն է մշակում: Երեխաներ նշում են՝ <<Այդ չարաբաստիկ պատերազմը>>, << Հայրենի երկիր Հայաստան>> և այլն : Երեխաները օգտվում են բառամթերքից և կազմում են փոքրածավալ տեքստ վերնագրին համապատասխան : Երեխան կարող է գրել և ուրիշ վերնագիր ընտրել իր տեքստի համար:

Երրորդ և չորրորդ դասարաններում երեխաները գրում են փոքրիկ փոխադրություններ, շարադրություններ, կատարում են բառապաշարային ձևափոխություններ :

Կարելի է առաջարկել սխալներով (մտքի) կազմված բնագիր և ուղղել մտքերի թերությունները : Երեխան կձգտի նախադասության մեջ շտկել միտքը և բերել ճիշտ կառուցվածքի : Խոսք կառուցելիս երեխան պետք է հասկանա մտքերի տրամաբանական հաջորդականության կարևորությունը և կարողանա այն ճիշտ կիրառել: Պետք է կարողանա կապ ստեղծել նախորդ և հաջորդ նախադասությունների միջև : Այսինքն դեպքերի հաջորդականությունը ճիշտ շարադրել :

Փոքրածավալ տեքստեր ստեղծագործելիս , երեխաներին կարելի է տալ որոշ բառեր և առաջարկել գտնել հոմանիշները :

Օրինակ `

Սիրուն- հմայիչ , գեղեցիկ , հրաշալի , հիանալի :

Թռչել- ճախրել , սավառնել , թևածել :

Վճիտ- պարզ , մաքուր , զուլալ :

Երեխաները պետք է իմանան, գլխի ընկնեն կամ կռահեն հեղինակի մտադրությունը , թե ինչպես կարող է վերջանալ տեքստը: Կարելի է անավարտ տեքստի համար շարունակություն հորինել:

Օրինակ՝

Երբ փոքր էի, ապրում էի շատ համեստ ու փոքրիկ տան մեջ: Մեր փողոցում կար մի շքեղ ու բարձրահարկ տուն: Տունը շրջապատված էր ամուր պարիսպներով: Մեր հարուստ հարևանները ոչ ոքի հետ չէին շփվում: Ես երազում էի գեթ մեկ անգամ լինել պարիսպների ետևում և տեսնել այդ շքեղությունը, բայց ինձ բախտ չվիճակվեց : Այդ մարդիկ շատ սառն էին ու անտարբեր… .

- Երեխանե'ր , ձեր կարծիքով ի՞նչ եղավ հետո:

Պատասխան – Երբ մեծացա, ընդունվեցի համալսարան, լավ կրթություն ստացա, լավ աշխատանք ունեցա և կառուցեցի մի շքեղ տուն, սակայն շարունակեցի շփվել իմ ընկերների հետ և նրանք հաճախ էին գալիս իմ տուն և մասնակցում տարբեր միջոցառումների: Կարելի է տեքստը առաջարկել և պահանջներ ձևակերպելբնագրի հետ կապված :

Օրինակ `

Դասավորել նախադասություններն այնպես, որ ստացվի պատմություն:

Ծիծեռնակներն ամեն գարուն գալիս են մեր բակը : Մայր ծիծեռնակը նստում է բնում , որ խնամի իր ձագուկներին , իսկ հայր ծիծեռնակը կեր է հայթայթում : Նրաք նորոգում են իրեն հին բները : Ամեն առավոտ ես արթնանում եմ նրանց ճռվողյունից: Աշնանը նրանք իրենց ձագերի հետ չվում են տաք երկրներ:

Մանուշակը քնքուշ էր, կապույտ և ցածրիկ, արոտների մեջ թաք կացած: Տղան քաղեց կարմիր կակաչներ, որ նվիրի մայրիկին: Մանուշակի բույրը տարածվել էր մարգագետնում: Անուշիկն ասաց տղային, որ կակաչը բույր չունի, ավելի լավ է ընտրել մանուշակին : Տղան շփոթվեց և կարմրեց …(շարունակել) :

Բնագիրը կարելի է վերլուծել, փոխել բառերը, շտկել թերությունները և ստանալ այլ փոքրաածավալ տեքստ:

Երեխաները կարդում են տեքստը, գտնում են ավելորդ մանրամասնությունները, հանում են տեքստից, հնարավոր ոճական սխալներն են շտկում, իմաստին չվերաբերվող նախադասություններն են շտկում, շարադրանքը բերում են վերջնական տեսքի և ներկայացնում յուրաքանչյուր խումբ իր շարադրանքը դասարանին: Քննարկում են, կարծիքներ հայտնում և գնահատում խմբերը միմյանց: Փոխադարձ գնահատում: Երեխաները ամենից շատ դժվարանում են կապակցված խոսք կառուցելիս: Այդ աշխատանքը հունի մեջ գցելու համար ուսուցիչը պետքէ մեծ ուշադրություն դարձնի լրացուցիչ ընթերցանությանը: Յուրաքանչյուր

աշակերտ պետք է ստանա հանձնարարություն , որը պետք է կարդա և ներկայացնի դասարանին: Բառապաշարը հարստանում է ընթերցելու միջոցով, խոսք կառուցելու կարողությունը նույնպես շատ ընթերցողի մոտ շուտ է զարգանում: Երեխան երբեմն կարդացած գրքից , կամ հատվածներից իրեն շատ դուր եկած մասերը անգիր է անում, կրկնում է բառեր կամ նախադասություններ, որոնք տպավորվել են իր ենթագիտակցության մեջ: Կարելի է դասարանում ունենալ պատի թերթ, որտեղ յուրաքանչյուր աշակերտ հոդված է գրում շաբաթվա ընթացքում տեղադրում թերթի էջերին: Համադասարանցիները կարդում են նկարծիք հայտնում: Սեփական կարծիքը պետք է հայտնել առանց վիրավորելու դիմացինի: Պետք է համբերատար լսել դիմացնին մինչև արտահայտի իր մտքերը:
Ուսուցիչը երեխաներին առաջադրում է հարցեր, որոնք ստիպում են կարծիք հայտնել տվյալ տեքստի մասին:
Օրինակ՝
<<Դու ինչպե՞ս ես կարծում>>, <<Դու համաձա՞յն ես>> և այլն: Այդպիսի հարցերի միջոցով կարելի է իմանալ դիմացինի կարծիքը, մոտեցումը և նրան ներքաշել երկխոսության մեջ: Երկխոսությունը նույնպես օգնում է խոսք կառուցելուն: Կարելի է կազմակերպել երկխոսություններ և շտկել թերությունները աշակերտների միջոցով:
Մայրենիի դասագրքերում շատ կան դասանյութից բխող հարցեր և առաջադրանքներ, որոնք նպաստում են խոսք կառուցելու կարողության ձևավորմանը:
Երեխային պետք է մղել դեպի սովորելը: Ինչպե՞ս: Սովորելը պետք է դարձնել հետաքրքիր, երեխան պետք է հասկանա, թե ինչու է սովորում, պետք է հասնել այն բանին, որ երեխան դառնա նախաձեռնող, կարողանա համագործակցել տարբեր ոլորտներում և ընդունակություններ ձևավորել:
Երբեմն մենք գնում ենք էքսկուրսիա՝ հացի գործարան, բուսաբանական այգի, և այլն: Երբ վերադառնում ենք պահանջում եմ գրել տպավորություններ, ի՞նչ տեսա, ի՞նչ զգացի: Երեխաները փորձում են անհատական տեսակետներ հայտնելտեսածի մասին: Օգտագործում են համապատասխան բառամթերք և ներկայացնում են դասարանին: Լրացնում են ընկերները, իրենց տեսակետներն են հայտնում յուրաքանչյուրն առանձին – առանձին: Ուսուցիչը նույնպես վերջում կարող է հայտնել իր տեսածի և զգացածի մասին:
Բուսաբանական այգին ինձ համար հրաշալի նորություն էր: Բույսերի և ծաղիկների բազմազանությունը, թռչունների դայլայլը իսկական հրաշք էր: Ես այնտեղ տեսա բույսեր, որոնց կյանքում առաջին անգամ էի տեսնում ՝ ծաղկած կակտուս, արմավենի: Այնքան մաքուր էր օդը, բուրումնավետ, որ թվում էր , թե դրախտվայր եմ ընկել: Բույսերը կարծես ժպտում են ինձ: Հոգիս ջերմանում էր : Բույսերը մարդուն նրբաճաշակ են դարձնում:

Փոքրաածավալ տեքստը կարող է մարդու մեջ ինքնուրույնություն ձևավորել , առարկայի կամ երևույթի վերաբերյալ կարծիքներ հայտնելու կարողություններ առաջ բերել: Երեխան փոքր տարիքից կկարողանա տեսածը, լսածը ընկալել և գրագետ արտահայտվել այդ մասին: Դրա համար նա պետք է հասկանա գեղեցիկ և ճիշտ խոսելու անհրաժեշտությունը: Աստիճանաբար իր խոսքից պետք է հանի առօրյա խոսակցական, բարբառային արտահայտությունները: Երեխան ինքը պետք է գտնի, իր խոսքի թերությունները և կարողանա շտկել: Այսօր կարծես մեր ոսկեղենիկ գրական հայերեն խոսքը դուրս է մնում ընդհանուր խոսակցական ոլորտից: Նույնիսկ հեռուստահաղորդումների ժամանակ երբեմն չեն խոսում մաքուր գրական հայերենով: Ավելի շատ գործածվում է խոսակցական առօրյա, կարելի է ասել <<թափթփված>> խոսքը, որը հաճելի չի լսողին: Երեխան պետք է խոսելով խոսել սովորի, գրելով գրել սովորի: Պետք է երեխային շանս տալ պատմել իր կյանքի , առօրյայի , սիրելի մարդկանց , կենդանիների , խաղերի և խաղալիքների մասին: Երեխան պետք է դուրս գա դասի սահմաններից: Դիտել են որևէ ֆիլմ:

Օրինակ՝

<<Մի քանի օր դպրոցում>>: Հաջորդ օրը պետք է կազմակերպել քննարկում: Դուր եկավ ձեզ ֆիլմը: Ի՞նչու: Ու՞մ շատ հավանեցիք: Ո՞րն էր ֆիլմի հիմնական միտքը: Ի՞նչպես սկսեց ընթերցել և սիրել գիրք ընթերցելը ֆիլմի հերոսը: Ո՞վ էր նրա ընկերուհին, որը կարողացավ սեր արթնացնել տղայի ընթերցելու նկատմամբ: Ի՞նչպես երեխաները փրկեցին դպրոցը փակվելու վտանգից:

Երեխաները շատ պատասխաններ են տալիս և վերջում ցանկություն են հայտնում նմանվել այդ դպրոցի աշակերտներին : Այս աշխատանքը հարմար է կատարել չորրորդ դասարանում: Երեխաների բառապաշարը հարստացնելու գործում մեծ դեր են կատարում նաև շուտասելուկները, ասացվածքները, թևավոր խոսքերը, բանաստեղծություններ արտասանելը, ընտրովի հատվածներ անգիր անելը: Աստիճանաբար երեխան դրանք մտապահում է և սովորում է գեղեցիկ մտքեր և արտահայտություններ: Երեխան պետք է մանկական գրականություն կարդա , որն ազդում է փոքրիկ ընթերցողի զգացմունքների և մտքի վրա: Այն հարստացնում է երեխայի բառապաշարը , կենսափորձը , հղկում է գեղագիտական ճաշակն ու կոփում կամքը : Մանկական ստեղծագործությունը երեխայի համար դառնում է ներշնչանքի աղբյուր և նա ձգտում է ստեղծագործել : Փոքրիկի համար ամեն ինչ պետք է լինի հեքիաթային , հրաշալի , ոչ հասարակ : Երեխաներն ավելի ուշադիր են բացասական արարքների հանդեպ, արագ են ընկալում և մտապահում: Սակայն միշտ նախընտրում են նմանվել դրական հերոսներին: Երեխաները սովորում են հոգատարություն մեծերի հանդեպ,

աշխատասիրություն և իմանում են, որ կյանքում աշխատանքն է հզոր շարժիչ ուժը:

Նորից ու նորից ենք մենք համոզվում, որ ստեղծագործելու համար երեխան պետք է ընթերցի, մտքի թռիչք ստանա գրքերից :

Կարելի է հանձնարարված գրքից մի հատված ընտրել, դուրս բերել հենակետային բառերը և դրանց ստեղծագործել փոքրածավալ տեքստ:

Օրինակ `

1. Խուրձ, թանձր խավար, մայրամուտ, արջի քոթոթներ, ընկուզենի, թփուտներ , մայր արջ

Արշալույսին նոսրացավ թանձր խավարը: Մայր արջն իր քոթոթների հետ մոտեցավ ընկուզենու ծառին: Քոթոթները թռչկոտում էին խոտերի խրձերի վրայով, կռվշտում և մտնում թփուտների մեջ: Մայր արջը ծառն էր բարձրացել և ընկույզներ էր նետում ցած: Քոթոոթները վայելում էին անուշահամ ընկույզը մինչև մայրամուտ:

2. Կարապ, սպիտակափետուր, երամ, լիճ, մակերես, Կարեն, լճափ, գյուղ, մոտակայք , վիրավոր թևեր , խնամել , բուժել , գարուն , կարապների երամ:

Կարենը շատ էր սիրում զբոսնել գյուղի մոտակայքում գտնվող լճափին : Այդ օրը նա մենակ գնաց լճափ : Երկնքում լսվում էր կարապների երամի թևերի ձայները : Կարենը վերև նայեց : Երամից հետ էր մնացել մի սպիտակափետուր կարապ : Նա հազիվ էր թափահարում թևերը : Քիչ անց նա քարի կտորի նման ընկավ լճի մակերեսին և փռեց թևերը : Կարենը մտավ ջուրը , նկատեց , որ կարապը վիրավոր է , թևից արյուն էր հոսում : Կարենը կարապին գրկեց և տուն տարավ : Մինչև գարուն խնամեց և կերակրեց կարապին : Գարնանը կարապին լճափ տարավ: Կարապը միացավ իր վերադարձած երամին :

3. Այցելություն գյուղ, ճամբարում, ձկնորսություն, լճափին և այլ վերնագրեր առաջարկել և կազմել փոքրածավալ տեքստի հարցաշար պլան :

Այցելություն գյուղ

1. Ինչպիսին էր գյուղի բնությունը :
2. Տների դասավորվածությունը :
3. Կենդանիների և թռչունների առկայությունը:
4. Գյուղի առօրյան :
5. Գյուղի բնակիչը :

Մենք շատ ենք սիրում ամռանը լինել գյուղում և հանգստանալ: Տատիկս Դդմաշեն գյուղում է ապրում: Գյուղը փռված է լեռների փեշերին կարծես մի խոր ափսեի մեջ: Մի կողմում անտառաշերտ կա և մի քչքչան գետակ: Գյուղի բնությունը շատ հմայիչ է և օդը մաքուր: Տները դասավորված են շարքերով : Կղմինդրե տանիքները փայլում են արևի շողերից: Ամենուրեք լսվում են ընտանի կենդանիների ձայները և վայրի թռչունների դայլայլը: Գյուղական առօրյան սկսվում է աքաղաղի կանչով և վերջանում դաշտից

վերադարձող հնձվորների ոտնաձայներով: Բնակիչները շատ են սիրում իրենց գյուղը և իրենց հողն ու ջուրը: Շատ հաճելի է լինել գյուղում:

Աշխատանքը շատ հետաքրքիր է , և երեխաները սիրում են ստեղծագործել Երեխային պետք է աշխատացնել, իսկ արդյունքը անպայման կերևա:

Եզրակացություն

Միանշանակ ստեղծագործական ունակությունները զարգացնելու համար երեխան պետք է ընթերցի գեղարվեստական ստեղծագործություններ, այցելի պատկերասրահներ, թանգարաններ, էքսկուրսիաներ դեպի բնության գողտրիկ անկյուններ: Ուսուցչի դերը շատ մեծ է այս հարցում: երեխան պետք է անձնական շփումներ ունենա հասակակիցների հետ , ինչպես նաև ավագ դպրոցականների հետ: Պետք է նվազեցնել կախվածությունը տեխնոլոգիաներից : Գաղտնիք չէ , որ այս սերունդը քիչ է կարդում , որովհետև կախված է համակարգիչներից և հեռախոսներից : Ուսուցչի և ծնողի դերը մեծ է այս հարցում , որ ուղղորդի երեխային օգտվել այդ տեխնոլոգիաներից , բայց վերցնել լավը , օգտակարը : Շատ հուզական , ստեղծագործական միջավայր է առաջանում դասական երաժշտություն ունկնդրելիս : Ես հաճախ եմ օգտագործում այդ հնարը :

Գրականություն

Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար : Երևան 2004 թ.
Ակսել Բակունց <<Պատմվածքներ>>:
Վ.Անանյան <<Որսորդական պատմվածքներ>>: